

Վաղէսի հրամանաւ Տրայիանոս կոմս Հայաստան սեղանի վրայ մեռցուց<sup>1</sup>:

Ուստի 4<sup>րդ</sup> եւ 5<sup>րդ</sup> դարու Հայոց հանդիսապէս գործածած հանգանակը միայն Նիկիական եղած է, ինչպէս կ'երեւայ, գրեթէ իր ամենազուտ ձեւին մէջ, զոնէ 5<sup>րդ</sup> դարուն այսինքն այնպէս՝ ինչպէս մեզի կը հաղորդէ Բարգենի ա. թուղթը, աւելցրնելով ի վերջէ սա խօսքը. «Այսպէս հաւատացաք՝ որպէս մկրտեցաք եւ սուրբ Հարք կանոնեցին եւ այլ սահման արտաքոյ այսորիկ կանոնոյ չէ եւ ոչ ընկալաք եւ ոչ ընդունիմք»,:

Թէ ինչո՞ւ Առստանդինուպոլսոյ բնուած հանգանակը Հայաստան ան գործածուած թիւեր չունեցաւ՝ զորն որ բոլոր Արեւելք ունէր, նոյն երկրին եկեղեցական պատմութեան կը մեկնուի: Ասիկայ 5<sup>րդ</sup> դարուն վերջը Հայոց Յունացմէ բաժնուելուն հետեւութիւնն էր: Օսանթ բան է 3<sup>րդ</sup> եւ 4<sup>րդ</sup> տիեզերական ժողովներէն ետքը բոլոր արեւելք կամաց կամաց դադրեցան իւրաքանչիւր եկեղեցեաց առանձնական հանգանակներն, եւ մկրտելեաց միայն Նիկիականը կամ Ս-Պոլսինը կ'աւանդուէր: Շատ տեղ, ինչպէս Արուսաղէմ, առանձնական հանգանակը նախ Նիկիականին, Նիկիականն ալ ետքէն Ս-Պոլսինին տեղի տուաւ, մանաւանդ Օլենոնի շենոտիկոնէն (Սիաւորութեան գրէն) ետքը, որն որ կը պատուիրէր մինակ ասիկայ գործածել: Այսպէս նաեւ Յուստինոս կայսր 566 ին. վասն զի Միաբնեայք աւելի նախադասութիւն մը տալ կ'երեւային Նիկիական Հարց հանգանակին:

Արեմն եթէ 4<sup>րդ</sup> եւ 5<sup>րդ</sup> դարուն մեր Հարցը գործածած հանգանակը՝ հիմայ մեր գործածածը չէ եւ ոչ ալ՝ Ս-Պոլսինը, հարկաւ Նիկիականն էր: Այնը, զոնէ 5<sup>րդ</sup> դարունը մեզի պահած է Բարգեն վերը յիշուած ա. թղթոյն մէջ՝ ուր Բարգենի խանգարած լեզուէն բոլորովն տարբեր լեզուաւ՝ անանկ կ'եցած է, ինչպէս Ղաւկասեան յեղին սպիտակ մարգը Ափրիկէի Աթովպացւոյն քով կը կենայ:

Ահաւասիկ նոյնն՝ իրեն մանր տարբերութիւններովը, զորոնք բացայայտ ընելու համար՝ դնենք զիմացը նոյն խի Ս. Աթանասի «Վասն վճռոց Նիկիայ ժողովոյն», գրքին մէջ յառաջ բերած Աւսեբիոսի Աեսարացւոյ թղթոյն մէջինը: Տարբերութիւնները՝ զորոնք ուրիշ գրով կը դնենք, մտադրութեան արժանի են:

Հաւատամք ի Աստուած Հայր ամենակալ, ամենեցուն երեւելիաց եւ աներեւութից արարիչ, եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս յՈրդին Աստուծոյ, ծնեալ ի չօրէ Միածին, այս ինքն ի գոյութենէ

Πιστεύομεν εἰς ἕνα Θεὸν Πατέρα παντοκράτορα, πάντων ὀρατῶν τε καὶ ἀορατῶν ποιητὴν· καὶ εἰς ἕνα Κύριον Ἰησοῦν Χριστὸν τὸν Υἱὸν τοῦ Θεοῦ, γεννηθέντα ἐκ

<sup>1</sup> Ամ. Մարկեղ. Գեղեղ. Լ. ԳԼ. 1: